

Եւ սակայն ունինք: Կոստանդնուպոլսի հայրապետն Ոսկերեան (398-404) համեմատելով հաւատացելոյն օծումը հրեայ քահանայից օծման հետ, կ'ըսէ՝ թէ անոնց զլուխը, աջ աւանջն ու ձեռքը կ'օծուէին, «եւ սա ամենեւին իսկ ողջոյն օծանի» զլիւն սկսելով¹: Հայրապետիս այս ընդհանուր բացատրութիւնը կը պարզէ ու կը ճշգէ նոյն քաղաքի եկեղեցւոյն թուղթն առ Մարտիրոս եպիսկոպոս Անտիոքայ (460-471), ըսելով՝ թէ «կնքեմք կամ օծանեմք նախ սուրբ իւղովն զճակատն և զոնգունս և զականջս և զկուրծս և զամենայն զգայարանս»²: Օծանի կամ օծանեմք կ'ըսեն կրկին վկայքդ, որպէս զի ցուցնեն՝ թէ կը հետեւէին սովորութեան մը՝ որ զայն յիշողներէդ կանուխ սկսած էր բնականաբար: Ոչ ալ կրնանք ըսել՝ թէ Բիւզանդիոնէն դուրս անծանօթ էր այն: Գալով մեր ազգին, որովհետեւ արարողութիւնը հետ զհետէ զարգացեր են, աւելի բնական էր՝ որ զգայարանաց օծման զանցառութիւնն ի Հայս տեսնուէր Դ դարուն քան Զին: Սրղէն սահակեան կանոնք այդ թերութիւնն այլ եւս չեն նըշմարեր և ուղղեր: Իսկ Դ դարու մէջ օծման անկերպարան վիճակի մասին դիւրաւ կրնանք գաղափար կազմել, երբ նկատենք Հայոց մկրտութիւնը Լուսաւորչէն, յորում «իւզն օծութեան զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն, շուրջ զմարդկան խաղայր»³: Մկրտութեան իւղը լինի այդ թէ զրոշմին, ինչ որ դիւրին չէ ճշգել, կերարկման ձեւին անկատարութիւնն ակներեւ է հոգ. և այդ դարուն պէտք էր յանձնարարել մեզ զգայարանաց օծումը, ոչ թէ Զին:

9. Աւելին կայ: Մակար կը գրէ դրոշմելոց համար՝ թէ նախ «ձեռս ի վերայ դնելով, պարգեւեալ լինի Հոգին սուրբ», և ապա «հաւատովք օծանիմք յիւղ սրբութեան»: Լիլերկ քննելով հին մատենագրերը, տեսաւ՝ որ առաքելական անշատ ձեռնադրութիւնը դրոշմելոց վրայ կը տեւէ ու կը յիշուի արեւելեայց քով մինչեւ Դ դարու վերջերը. և յետոյ կը

խառնուի օծման հետ, այնպէս որ այնուհետեւ լուրջ լինաւ կը յիշեն Լաւողիկեայ ժողովը 380ին. «Հարցմունք և պատասխանիք առ ուղղափառս», անտիոքացի անծանօթ հեղինակի մը՝ 450էն կանուխ. Կոստանդնուպոլսի եկեղեցւոյն վերոյիշեալ թուղթն առ Մարտիրոս եպիսկոպոս Անտիոքայ, և ուրիշներ⁴: Նոյնը կը տեսնենք նաեւ մեր քով. Յաճախապատուելի, շարադրուած Ե դարու երկրորդ կիսուն, մկրտեալները կը նշանակէ լուր «օծմանը և Հոգւով ի Քրիստոս լուսաւորեալ»⁵: Եւ աւելի ալ կանուխ՝ Ագաթանգեղոսէ Լուսաւորչին վերագրուած օծման մէջ եւս, զոր տեսանք վերեւ, աներեւոյթ է ձեռնադրութիւնը: Այս բոլոր օրինակներէն կը հետեւի՝ որ մեր թղթին մէջ անշատ ձեռնադրութեան յիշատակութիւնը կրնայ պատշաճիւ Ա. Մակարայ միայն, և ոչ երկրորդին, որմէ իբր երկու դար յառաջ դադրած էր այն:

10. Կը գրէ երուսաղեմացին, «Զիւղ սրբութեանն եպիսկոպոսապետն օրհնեսցէ». և դժուարութեան պարագային՝ անոր հրամանաւ երկու կամ երեք եպիսկոպոս միաբանին և օրհնեն (410-11): Հ. Ակինեան այսպիսի հրահանգի «այլուր չէ պատահած». որով «ուշ ժամանակի միայն կրնայ վերաբերիլ», կ'ըսէ, այդ վերապահութիւնն եպիսկոպոսապետին (524-25):

Կը հարցուի նախ. եթէ այլուր չէ պատահեր, ինչպէս ուրեմն կրնայ «ուշ ժամանակի» վերագրել: Եւ յետոյ՝ չպատահիլն ըստ ինքեան ապացոյց մը չէ չգոյութեան: Քանի՛ բերաւոր մարդիկ կան աշխարհիս վրայ, որոց մեք չենք հանդիպիր, և որոնք հաւասարապէս կան ու կ'ապրին: Իսկ նկատմամբ մակարեան հրահանգին՝ ինքն ալ, ես ալ պատահած ենք սահակեան կանոնաց, որ Մակարայ բացարձակ ազդեցութեան ներքեւ կը կրկնեն՝ թէ «զիւղ մկրտութեան հարկաւո-

1. Մեն. թղթ. Պօղ. Ա, 591. — 2. Pitra, II, 187-88. — 3. Ագաթանգ. 621. — 4. Cabrol, III, 2529-30. — 5. Յճխատ, 15.

րութեամբ բերցեն առ մեզ (այսինքն առ կաթողիկոսն) քահանայք, և աստի ի մէջ ընկալցին զօրհնութիւն իւղոյն... վասն զի ոչ է իշխանութիւնդ այդ քահանայից, այլ եպիսկոպոսապետաց»¹: Հոս կը խօսուի արդէն հաստատուած ու յայտնի վերապահութեան մը մասին, զոր Մակար Բ չէր կարող ընդօրինակել Հայերէս, բայց Մակար Ա. կրնար ճանաչել ու տալ մեզ:

11. «Զիւզն օծման մեռելոցն և հիւանդացն և մկրտելոցն, կը գրէ մեր թուղթը, առանձնակ. օրհնեսցեն քահանայքն և եպիսկոպոսքն» (411): Բայց «իւղ մեռելոց անծանօթ է այլուստ», կը դիտէ Հ. Ակինեան, որովհետեւ «մեռելները օծել սովորաբար արեւելեան աղանդներուն յատուկ է», ըսեր է Հերգենրոթէր: Եւ Պատ. Հայրը Մակարայ «զիւզն օծման մեռելոցն» կ'ուզէ տեսնել ննջեցեալ եկեղեցականաց օծման և կամ մարտիրոսաց նշխարաց վրայ թափուած իւղին մէջ (525):

Անճիշդ է տեսութիւնդ ամբողջութեամբ: Կրնային արեւելեան աղանդաւորք օծել մեռելները. բայց չի հետեւիր՝ թէ ուղղափառներէն ալ չկային բնաւ՝ որ նոյն սովորոյթը գործադրէին, մանաւանդ օրինակաւ խնկման Յիսուսի մարմնոյն: Այսպէս Տերտուլիանոս կ'իմացնէ Սարայի խնկոց գործածութիւնն իւր օրով, զրեւով այսպէս. «Գիտացեն Սարացիքն՝ զի ի թաղման անդ քրիստոնէից բազում և մեծագոյն վարձք են նոցա քան զինքն իւր կելով»²: Խնկերը կ'ենթադրեն անոյշ իւրեան ալ: Եւ ս. Աթանաղիոսեայ մասին, նահատակուած Սերաստիոյ մէջ, կը պատմուի ժամանակակից Հիւլարիոսէ՝ թէ Եւսերիա տիկինն անոր մարմինը «պատեալ ազնիւ պատանօք և իւղովք անուշիւք», այնպէս կը տանի կը թաղէ³: Եթէ բացարձակ վստահութիւն չենք կրնար դնել այս վկայութեան հարազատութեան վրայ, ի նպաստ ասոր՝ իւղերու կիրարկումը կը հաստատէ Ագաթանգեղոս նաեւ մեր քով՝ ընդհանուր հաւատացելոց վրայ, Հայոց բերել տալով Լուսաւորչին «իւղս անուշուս և խունկս ազնիւս» պատելու Հոբի-

սիմեանց մարմինները⁴: Նոյնպէս ս. Շուշանկան մարմինը պատեցին «իւղովք անուշիւք և խնկովք»⁵: Այս սովորութեան մնացորդն է, և ոչ հին ու առանձին բան մը, — ինչպէս Հ. Ակինեան կ'ենթադրէ, — քահանայից ու եպիսկոպոսաց օծումը մեր քով, պարզ իւղերը միջին դարուն և պատշաճօրէն փոխուելով ս. մեռելին, և կենդանեաց իւղը տալով մեռելոց, ուսկից խորշողներ ալ կային, ինչպէս կը զգացնէ Ս. Ղազարու մաշտոցը ԺԱ. դարու, գրեւ լով այսպէս. «զոր մի՛ ոք ի յայսպիսի կարգ քրիստոնէութեան հեթանոսական զարշնոց աղարտեսցէ»: Կրնար ուրեմն Մակար Ա. եւս ճանաչել ու յիշել մեռելոց իւղը, և անոր իմաստը փոխելու պէտք չկայ: Կամ գէթ ինչ իմաստով որ յիշեց զայն Մակար Բ, կարող էր յիշել նաեւ իւր նախկին անուանակիցը մեր թղթին մէջ:

12. Ակնարկելով յիշեալ իւղոց օրհնութեան, Պատ. Հայրը կը կոչէ Փրանցի հետեւեալ խօսքը. «Գ. և Ե. դարերուն աւելեւեան եկեղեցին չունէր վերջին օծման իւղի օրհնութեան համար մասնաւոր բանաձեւ. յատկապէս առ այս սահմանուած նաձեւ. յատկապէս ուշ ժամանակի է: Ասոր բանաձեւը աւելի ուշ ժամանակի է: Ասոր կից կային սակայն աղօթքներ պարզ հիւանդաց իւղին համար» (525-26):

Անշուշտ. արեւելեան եկեղեցին չունէր վերջին օծումն և անոր իւղին օրհնութիւնը. նոյնպէս և արեւմտեանը մինչեւ Է. դար⁶: Բայց բոլորն ալ ունէին աւետարանական օծումն հիւանդաց⁷, կրկնուած նաեւ մերս Մանդակունիէն՝ թէ «հրամայեն մեզ պատուիրանք Աստուծոյ... հիւանդաց աղօթս և օծումն իւղոյ»⁸: Այսպէս կայ նաեւ թմուիսի (յեզիպոս) Սրապիոն եպիսկոպոսի մաշտոցը, զորմ Դ դարու առաջին քառորդին, որ ունի «Աղօթք ի վերայ իւղոյն հիւանդաց», յորում կը յիշուին

1. Սփերք, Բ, 92. — 2. Patr. Lat. I, 558. — 3. Վկայար. Ա, 65. — 4. Ագաթ. 571. — 5. Սփերք, Բ, 46. — 6. Cabrol, V, 1034. — 7. «Օծումն իւղով զբազում հիւանդս». Մարկ. 9, 13. — 8. Սրապիոն, 1860, 195.

թուղթս երկուս ի Մակարայ և յԵւստո-
քայ», որ էին իւր երկու անմիջական նա-
խորդները, «յառաջ քան զմեզ յաջոր-
դեալը ս. աթոռոյն Յակովբայ», ուստի մին
նոյն ինքն Մակար Բ: Եւ որովհետեւ այդ
թղթերէն մէկն էր «կարգաց եկեղեցւոյ»
մասին², որով մեր վիճեալ թղթի նիւթին
հետ հաւասար, Հ. Ակինեան կը հետեւցնէ.
«Զի կրնար խնդիր ըլլալ՝ թէ Յովհաննէս
ուրիշ գրուածք կ'ակնարկէ Մակարայ թղ-
թով». և «այսպէս կը հաստատուի թղթիս
(առ Վրթանէս թղթին) ժամանակը և հե-
ղինակը» (532):

Ուշադրութիւն: Յովհաննէս կ'ըսէ Աբա-
սայ՝ Աղուանից կաթողիկոսին, թէ դուն
ընկալար Բ Մակարայ գիրը, և Պատ. Հայրը
կ'իմանայ՝ թէ Սիւնեաց Վրթանէս եպիս-
կոպոսն է ստացեր, ու մեր գննած թուղթն
իսկ. և կ'անցնի իսկոյն Վրթանիսի ան-
ձին քննութեան: Երազ կը թուի. բայց
երազ չէ, իրականութիւն է, պարզուած
Հանդիսի էջերուն մէջ, ոչ շարժ բանասի-
րացս փեռեկած աչքերուն առջեւ:

17. Վրթանէս սիւնեցւոյ ժամանակա-
կից է Յովհաննէս գաբեղինեցի կաթողի-
կոսը, որ անոր թուղթ մ'ալ գրած է՝
«Ինչ յարմարութեամբ, կը հարցնէ Հ.
Ակինեան, Մակար իւր թուղթը ուղղած է
առ Վրթանէս եպիսկոպոսապետ, և ոչ
Հայոց կաթողիկոսին՝ Յ. Գաբեղինացւոյ,
կամ ինչ պատճառաւ Վրթանէս առանց
կաթողիկոսի գիտակցութեան կը թղթակցի
Երուսաղեմի պատրիարքին հետ յիւս եկե-
ղեցւոյ կարգաց»: Թէպէտեւ մեր տկար
ծանօթութիւններով, կը յարէ, «գծուա-
րին է ճշգրիտ գաղափար կազմել» նոյն
շրջանին Աղուանից ու Սիւնեաց մէջ պա-
տահած եկեղեցական անցից մասին, բայց
ինք կ'ապաւինի Մաքենեաց առաջնորդ
Սողոմոնի վերագրած տեղեկութեան, —
պահուած կաղանկատուացւոյն պատմու-
թեան մէջ, — թէ երբ 591ին Մովսէս
կթղ. եղիվարդեցին իւր համախոհներով
գատուեցաւ ընդհ. Եկեղեցիէն, և պահպա-
նողականը այդ պատճառաւ իրենց կաթո-
ղիկոս դրին զՅովհան³, ժամանակի Սիւ-

նեաց եպիսկոպոսը Պետրոս՝ սրտնեղած
«հայրապետութեան երկուանալոյն» դէմ,
բաժնեց իւր վիճակը կաթողիկոսութենէն,
պատուիրելով իւրայնոց՝ Աղուանից կա-
թողիկոսէն ընդունիլ ձեռնադրութիւն և
միւսոն, «մինչեւ միասցի աթոռն ս. Գրի-
գորի», որ եղաւ Աբրահամու օրով. այն-
պէս որ Պետրոսի յաջորդը, որ է մեր
ծանօթ Վրթանէսը, Աղուանից պատմչին
համեմատ՝ անոնց Զաքարիա հայրապետէն
ձեռնադրուեր է՝ «Այս խնդիրները յու-
զուած են ուրեմն Պետրոս Սիւնեաց եպիս-
կոպոսի կեանքի վերջին տարիներուն, այն
է 556էն քիչ յետոյ», կ'ըսէ Հ. Ակինեան,
որ միանգամայն կը յորդորուի աղոնց
շարժառիթն որոնել «աւելի քաղաքական
քան դաւանաբանական հողի վրայ». այն
է Սիւնեաց Վահան իշխանին հայ նա-
խարարաց միարանութենէն բաժնուելու
ձեռնարկին մէջ, մէկ կամ միւս պատճա-
ռաւ սակայն ընդունելով միշտ Սիւնեաց
առաջնորդին ըմբոստութիւնը (533-37):

Վաղուց սպասած առիթս կը ներկա-
յանայ՝ Պետրոսի ապստամբութեան այդ
տարրացած առասպելը մաքրելու պատ-
մութեան հրապարակէն: Նախ ընդունելի
չէ Պատ. Հօր գործը՝ եպիսկոպոսիդ վերա-
գրուած ընդվզման ժամանակն ու պատ-
ճառը յեղաշրջելու: Պատմական բոլոր տե-
ղեկութիւնք իրողութիւններ չեն. անոնց
մէջ կան ստուգութիւնք ու կեղծիքներ
միանգամայն: Օրմանեան դպրոցին գիւտն
եղաւ՝ բոլոր աւանդութեանց մէջ անվրէպ
իրականութիւն մը տեսնել, ինչ ձեւով ալ
լինի: Կը ջնջես՝ անդիմադրելի փաստե-
րով՝ աւանդութեան մը բոլոր տարրերը՝
անունները, թուականները, հանգամանք-
ները. և ինքն ալ կը խոստովանի անոնց
անտեղութիւնը: Եւ սակայն աւանդու-
թիւնը կը շարունակէ պահել յաչս անոր՝
անանուն, անթուական, անհանգամանք
բայց իրական հիմ մը, հաստատուած

1. Տպ. Վրդշատ. 1896, էջ 15, 1. — 2. Անդ. 1. —
3. Գիրք Բղրոց, 78. — 4. Սեբէոս, 87. — 5. Մովս.
Կաղանկ. 1860. 217.

ոչընչի վրայ, և ի նպաստ անոր գրեքը
մ'ալ հրապարակ կը հանէ քեզ պանծա-
նօք: Եզական երեւոյթ մ'է ու պիտի մնայ
Օրմանեան դպրոցն արդի բանասիրութեան
մէջ: Մեր ընդ հակառակն կ'ընդունինք կեղծ
ու բոլորովին անհիմն աւանդութեանց գո-
յութիւնն ալ. և զանոնք բաժնելու համար
իրականներէն՝ պէտք ունինք անոնց հետ
կապուած հանգամանաց՝ որ կը մատնեն
անոնց ստեղծականութիւնը. և որոնք երբ
անջատուին ու փոխանակուին ուրիշ են-
թադրականներով, ինչպէս ներկայ պա-
րագայիս կ'ընէ Հ. Ակինեան, կ'ունենանք
երեւակայական պատկերներ, որոնք կեղ-
ծիքը ճշմարտանման կ'ընեն, բայց ճշ-
մարտութեան չեն փոխեր: Ապա թէ ոչ,
բնաւ կեղծիքներ չէին մնար անցելոյն մէջ,
ոչ ալ կեղծարարներ աշխարհիս վրայ:

Չեմ կարող ընդունիլ նախ Պատ. Հօր-
մէն ապստամբութեան տրուած պատճառը:
Սիւնեաց քաղաքական շարժումները չէին
կրնար գրգռել ինչեւ անոնց առաջնորդին՝
ըմբոստանալու հայրապետին դէմ, որոյ
Սիւնեաց հակառակ և անոնց վարմունքն
արդարացնող գործունէութեան մ'ակնարկ
չկայ պատմութեան մէջ: Պետրոս կ'ապրէր
Ներսէս աշտարակեցւոյն օրով, և 555ին
մասնակցեր է անոր խմբած ժողովին,
որուն վերաբերեալ երեք թղթերուն մէջ
կը յիշուի իւր անունը՝ Մինչեւ հող ու-
րեմն հաշտ էր նա հայրապետին հետ:
Նոյնպէս մնացեր է նաեւ մինչեւ իւր մահը.
վկայ՝ Աշտարակեցւոյն յաջորդը Յ. Գաբե-
ղինացին, որ Պետրոսի յաջորդին Վրթ-
թանիսի գրած թղթին մէջ յիշելով 555ի
ժողովին մասնակցողները, որոց մէջ էր
ինքն ալ դեռ իբրեւ եպիսկոպոս, կ'ըսէ.
«ընդ որս էր և կրանկիկ Պետրոս եպիս-
կոպոսն ձեռն»: Արդ՝ եթէ նա այդ թուա-
կանէն յետոյ ապստամբած լինէր, և իրեն
յաջորդը ունեցած ուրիշ ապստամբ մը (Վրթ-
թանէս), Գաբեղինացին իւր գրուած ա-
թոռին դէմ այդ վնասապարտ մարդը, հայ-
րապետական թեմին պառակտիչը՝ չպիտի
կարենար արժանացնել կրանկի տիտղոսին
և այդ յարգական յիշատակութեան: Այս

իսկ կը բաւէ արդէն հերքելու անոր ապս-
տամբութեան համարը:

Աւելի եւս անտեղի են Աղուանից պատ-
մչին, ըմբոստութեան գրոյցին բուն աղ-
բիւրին, այդ շարժման վերագրած ժամա-
նակն ու պատճառը, որուն Օրբելեան նիւ-
թական կրկնողն եղաւ: Պետրոս կը վախ-
ճանի 562ին (ըստ Հ. Ակինեանի), աթոռը
թողլով Վրթանիսի. իսկ Յովհաննէս կա-
թողիկոս, որ ժամանակակից ու թղթակից
է վերջնոյդ⁴, իրեն յաջորդ կ'ունենայ՝
574ին՝ զՄովսէս եղիվարդեցին: Եւ ասոր
օրով է՝ որ Պետրոս 591ին, այսինքն է
խաղաղութեամբ վախճանելէն ու թաղուե-
լէն 29 տարի վերջ, իւր գերեզմանէն
լին 29 տարի վերջ կը պարզէ՝ «հայ-
րապետութեան երկուանալոյն» պատճա-
ռաւ: Գեղեցիկ զիւտ աղուան պատմչին
երազակոծ մտքին, որուն թող հաւատայ
ով որ կրնայ:

Գալով Վրթանիսի ձեռնադրութեան
Աղուանից Զաքարիա կաթողիկոսէն, պէտք
է նկատենք՝ որ Սիւնեաց այդ առաջնորդը
ժամանակակից էր Զաքարիայի նախորդ-
ներէն Աբասայ, որոյ իշխանութեան «ամս
քառասուն և չորս» կու տայ Կաղանկա-
ստուացին, սկսելով Փոսրովու երկրորդ
տարիէն (91). որով կը հովուէ 539-576
տարիներուն: Եւ այդ շրջանին մէջ ալ
նստաւ Վրթանէս (562ին), որով Գաբե-
ղինացին կրնար թղթակցիլ միանգամայն
անոր և Աբասայ հետ: Իսկ Զաքարիա՝
Աբասայ երկրորդ յաջորդը կը նշանակուի
Աղուանից պատմութենէն, յետ Վիրոյի՝
որուն կու տայ 34 տարի (275). որով
Զաքարիա նստած կը լինի 610ին, և
զՎրթանէս ձեռնադրած իւր գահակալու-
թենէն 48 տարի յառաջ: Հրաշալի ժա-
մանակագրութիւն մ'ալ հոս, զոր Հ. Ակի-
նեան իսկ չմարտելով, լռելեայն Վրթանիսի
ձեռնադրիչ ուզեց զԱբաս (543), հին
կեղծիքին տեղ նոր կեղծիք մը դնելով,
ինչ որ ընդունելի կանոն մը չէ՝ ըսինք:

1. Գիրք Բղրոց, 70, 73, 76. — 2. Անդ. 79. —
3. Անդ. 78. — 4. Անդ. 78, 81.

Այդ երկու փաստերը բաւական են հետեւեցնելու համար՝ թէ անհեթեթ առասպելներ են Պետրոսի ապստամբութիւնը, անոր շարունակութիւնը Վրթանիսէն, և վերջնոյս օտար ձեռնադրութիւնը: Սողոմոնի ընծայուած այդ տեղեկութիւնը տրւողը Մովսէս կաղանկատուացին չէ, ինչպէս կարծեց Հ. Ալիքեան, նոյն պատմիչը միանգամայն զնեւով ժ. դարուն (533, 543): Մովսէս կ'ապրէր է դարուն, և իւր պատմութիւնը կը հասցնէ մինչեւ Բ հատորին ԻԲ գլուխը, որ միանգամայն անոր վերջաբանն է: Երկրորդ անծանօթ մը կը շարունակէ և կը հասցնէ մինչեւ Գ հատորին ԻԱ գլուխը, իբր 869 թուականը: Յետոյ երրորդ մը կը տանի ժ. դարու վերջերը: Ագոցմէ երկրորդն է՝ որ յառաջ կը բերէ Մաքենեաց հօր հատուածը, որ սակայն կը խօսի լոկ եկեղեցական նուիրապետութեան մասին, զոր կ'աւարտէ 217 էջին հինգերորդ տողով: Եւ ապա կը շարունակէ աղուանն իսկ, պատմելով Պետրոսի ըմբոստութիւնը, և ակնարկելով «նպերտ բարուց Հայաստանեայց», որով կը զգացնէ իւր օտար լինելը: Այդ անծանօթ աղուանին գիւտն էր ուրեմն ապստամբութիւնը, որոյ մէջ իրենց աթոռին պատուաւոր տեղ մը տալու նպատակը զգալի է: Ոչ Պետրոս և ոչ Վրթանէս հայրապետական աթոռէն զատուած չապրեցան երբեք: Եւ ազո՛վ Գաբրիէնացի կաթողիկոսը կրնար գրել Վրթանիսի՝ թէ «որպէս ցոյժմ լեալ էր (Սիւնեցիքդ) ազգ սուրբ, ժողովուրդ սեպահական տեառն Աստուծոյ (ուստի և հայրապետական աթոռոյն), նոյնպէս և այժմ էր և մինչեւ յաւիտեան, զուր և զաւակք ձեր»:

Արդ՝ եթէ Վրթանէս ի միութեան էր կաթողիկոսին հետ, անտեղի կը լինէր՝ որ Մակար Բ «առ համօրէն եպիսկոպոսս և քահանայս Հայոց» (408) տալիք հրահանգները յղէր սոսկական եպիսկոպոսի մը, և ոչ անոնց հայրապետին: Իսկ եթէ հայրապետը հակաքաղկեդոն Սիւնեաց առաջնորդը քաղկեդոնական նկատուելուն համար ըրաւ այդ քայլը, իւր կաթողի-

կոսէն՝ ուստի և հայ կղերէն անջատուած (եթէ ընդունէինք իբր աղապիսի) եպիսկոպոս մ'ի՛նչ հեղինակութիւն կրնար ունենալ, որպէս զի Մակար Բ զայն իրեն թարգման կարգէր հայ եկեղեցւոյ առջեւ: Հետեւաբար Վրթանէս սիւնեցի եթէ հպատակ իւր կաթողիկոսին և եթէ ապստամբ, Մակար Բ չէր կարող ուղղել անոր առ Հայս թուղթը:

18. Երուսաղեմի հայրապետը կը մեղադրէ «Բասենոյ և Բագրեւանդայ» եպիսկոպոսը Տուրգ՝ իւր ինքնագլուխ ընթացքին պատճառաւ (412): Հ. Ալիքեան Տուրգ անունը կը փորձուի մերձեցնել Տիրիկ (ուղղագոյնը Տիրակ) կամ Մարկոս եպիսկոպոսաց Բագրեւանդայ, որ կը յիշուին 2 դարուն, ենթադրելով՝ որ ազոնց մին կամ միւսը Մակարի յոյն բնագրին մէջ աղաւաղուեր և հայացեր է Տուրգիոս՝ ձեւով: Միանգամայն կը զիտէ՝ որ Տիրակ կամ Մարկոս սոսկ Բագրեւանդայ եպիսկոպոս նշանակուած են, մինչ նոյն շրջանին Բասենոյ եպիսկոպոս են նախ Գրիգոր և ապա Ներս՝: Եւ հոգ կամ յետոյ իւր կոչած օրինակաց մէջ, սկսեալ 555էն մինչեւ 607, չկայ ոչ մին՝ ուր երկու զաւառները մէկ առաջնորդ ունենան Տուրգի պէս: Հետեւանք: «Թերեւս», կ'ըսէ Պատ. Հայրը, Գրիգորի մահուամբ Բասենոյ աթոռը թափուր մնաց ժամանակ մը, և Տիրիկ=Տուրգ զայն ալ գրաւեց, ու նկատուեցաւ առաջնորդ Բասենոյ և Բագրեւանդայ (546-49):

Բայց քերեւը կրկին երես ունի, հաստատական ու ժխտական, որով փաստ մը չի կազմեր. այլ բռնազրօսիկ հետեւանքը մակարեան թուղթը 2 դար փոխադրելուն. ուսկից երբ հրաժարի, պէտք չի մնար երկու վիճակաց անջատման շրջանին մէջ միջանկեալ պատահական կարճ կցում մը ենթադրելու. ոչ ալ Տիրիկ ընելու Տուրգ

1. Գիրք քրդոց, 79. — 2. Այդպէս կ'ենթադրէ Տուրգեայ սեռականէն, որ Տուրգ ձեւով ալ կրնար նոյնպէս հոլովուիլ, ինչպէս Ներեայ, Կիսեայ եւն. — 3. Գիրք քրդոց, 73, 78, 81:

անունը, որ արդէն ծանօթ էր մեր նախնեաց՝ Տուրք կամ Տորք ձեւով, և վիպականօրէն ընծայուած Հայկայ սերնդներէն միոյն՝, ուրեմն և անկարօտ սրբազրուութեան: Այլ Տուրգն ու միացեալ թեմը կը տեղափոխենք Գ դար, և կ'ունենանք իրնդրոյն բնականօն վիճակը, առանց առ խարխափ թարթափելու ենթադրութեանց մէջ:

19. Այդ Տուրգն է ուրեմն՝ որ «յանդգնագոյնս խորհի, կ'ըսէ Մակար. եպիսկոպոս միայն աթոռաւ, և ընդ արքեպիսկոպոսին ինքեամբ անձին տայ պատիւ, զոր չէ արժան ընդունել» (412): Ո՞ր արքեպիսկոպոսին: Նոր քերեւ մը կը բաւէ Հ. Ալիքեանին՝ զատելու զՀայս Բիւզանդիոնէն՝ Դուռայ 555ի ժողովով, Բագրեւանդ ու Բասեն այդ աթոռի անջատելու Դուռի հայրապետանոցն ու կցելու յուռնական բաժնին, և վերջնոյս մէջ ենթադրելու «արքեպիսկոպոս մը, քերեւս Վրթանէս ինքնին. և իրեն հետ էր մրցութիւնը» (545):

Այս քերեւներն ալ զուրկ են գոյութեան իրաւունքէն: Զի նախ՝ 555ի ժողովը, խմբուած յատկապէս «նեստորական խուժկաց» դէմ, ի զուր կ'ամբաստանուի իբր հեղինակ հայ հերձուածոյն, որոյ ակնարկութիւնն իսկ չկայ անոր թուղթը երեք յիշատակարանաց մէջ, որոց գլխաւոր նիւթը պիտի կազմէր՝ եթէ ստոյգ լինէր, և ոչ թէ ծածկուէր լուծեան քողով: Այս ձրի համոզումն այլուր հերքած եմ, և հոս չեմ կրկնել: Յետոյ՝ Տուրգի հետ Հ. Ալիքեանի հաւասարեցուցած «Տիրակ Բագրեւանդայ եպիսկոպոսը» նոյն ժողովին մէջ հանդարտիկ նստած էր, և իբր ձայնակից կը ստորագրէր անոր որոշմանց՝. ուսկից պարզապէս կը հետեւի՝ որ ժողովը հետի էր անոր գծաւորեան պատճառ մը լինելէ: Մակարայ խօսքը՝ թէ Տուրգ «սակաւուր ընդ արիանոսս միաւորեալ է և դարձեալ խղճեալ» (412), Պատ. Հօր անուշադրութեամբ մեկնել կու տայ՝ «խղճեաց, այսինքն հեռացաւ Դուռնէն» (545), ուր Մակար արիանոսներէն կ'ըսէ, ոչ Դուռնէն: Արդ՝ եթէ կարենայինք Տուրգի

մէջ տեսնել զՏիրակ, ոչ սա հեռացեր է երբեք հայրապետէն. ոչ ասոր օրով «Դուռնոյ կաթողիկոսարանէն անջատուած բաժին» մը կար՝ բովանդակող նաեւ իւր վիճակին. ոչ ալ այդ բաժնին մէջ «Վրթանէս արքեպիսկոպոս» մը, որոյ հետ մրցակցելու ձկտումն ունենար Տիրակ: Ոչ մէկ իրականութիւն այդ ենթադրութեանց մէջ: Սիւնեաց մետրոպոլիտութեան մարման ինքնին ժ. դարէն յառաջ գոյութիւն չէ ունեցել, ինչպէս ցուցած եմ այլուր. և ի զուր է «անոր արմատը 2 դարու մէջ փնտռել» (545): Որով դարձեալ Գ դարու մէջ որոնելու ենք մեք իւր արքեպիսկոպոսէն ըմբոստացած Տուրգը:

20. Մակարայ թղթին մէջ իսկապէս կայ արքեպիսկոպոս կամ եպիսկոպոսապետ մը՝ Վրթանէս անուն (408, 412): Մեք այդ տիտղոսն առաջին դարերուն սեպհական գիտենք մայրաքաղաքացի եպիսկոպոսաց ու կաթողիկոսաց միայն, որ իրենց ներքեւ եպիսկոպոսներ ունէին, որով և մեր հայրապետաց՝: Արդ Մակար Բ ի՞նչպէս կրնար տալ զայդ Սիւնեաց սոսկական եպիսկոպոսին: Հ. Ալիքեան կ'ուզէ՝ որ նա իշխանութիւն տուած լինի անոր միւռոն օրհնելու. և «կ'երեւայ թէ Մակար անուանած կամ նկատած է զՎրթանէս այս դէպքին արքեպիսկոպոս կամ եպիսկոպոսապետ» (543):

Պատմութիւնն աթոռներու բարձրացումը տիեզերական ժողովոց յատուկ ցոյց կու տայ Եկեղեցւոյ միութեան շրջանին, ինչպէս ըրին Նիկիոյ, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովները: Իսկ հոս Մակար ինքնագլուխ իրեն աստիճանակից մը կը ստեղծէ յանկարծակի, այսինքն Հ. Ալիքեան ստեղծել կու տայ, և ինքն Հ. Ալիքեանի ստեղծել հեռուոր վիճակի մը մէջ: Եւ այդ աստիճանը պիտի ունենայ Վրթանէս՝ միւռոն օրհնելու վայրկենին միայն, և յետոյ պիտի հանէ՝ ծալէ

1. Խորեն. Բ, Ը — 2. Կարեւոր խնդիրներս, 576-78. — 3. Գիրք քրդոց, 73. — 4. Կարեւոր խնդիրներս, 281-85. — 5. Աղաթ. 645, 650. Փաւստ. 9, 16, 26, 72, 75 եւն.

ու պահէ, ինչպէս ղերասանները կը վա-
րուին իրենց բեմական հագուստներու հետ,
յետ ներկայանալու բեմի վրայ որ և է
օտար ղէմըով: Սիւնեաց ապստամբութեան
առասպելը կարկատողին մտքէն անգամ
չանցաւ՝ ոչ արքեպիսկոպոսութիւն տալ
անոնց առաջնորդին, և ոչ մեռն օրհնելու
իրաւունք. այլ ընդ հակառակն կ'ըսէ՝ թէ
«գիւղն օրհնութեան ամ յամէ առնուին
Սիւնիք յԱղուանից»¹, նոյնպէս առասպել-
լական:

Ասոր հետ կը նկատեմ՝ որ Մակարայ
աղինարկած արքեպիսկոպոսն աւելի բան
մ'է քան հասարակ կամ ղիպուածական
տիտղոսաւոր մը. գործնական գլուխ մը
եպիսկոպոսաց, և երուսաղեմացին «հնա-
զանդութիւն» կը պահանջէ Տուրգէն անոր
հանդէպ: Եթէ դա Սիւնեաց առաջնորդը
լինէր, պիտի ունենար ուրեմն իրեն հը-
պատակ եպիսկոպոսներ եւս. որովհետեւ
Բագրեւանդ բաւական հեռի էր Սիւնիքէն,
և անջատուած իրարմէ միջանկեալ գա-
ւառներով, որոց վրայ եւս իշխելու էր
նա՝ որ Բագրեւանդայ վիճակաւորին կը
հրամայէր, այդպէս իւր ներքեւ ունենալով
«Դուռնոյ կաթողիկոսարանէն անջատուած
բաժին» մը: Այսպիսի եպիսկոպոսապետի
մը՝ մեր սովորական լեզուով կարողիկոս
կ'ըսենք Հայերս: Եւ եթէ ընդունինք Հ.
Ալիւնեանի տեսակէտը, պիտի հետեցնենք՝
որ Սիւնեաց առաջնորդը դարձեր է հոգ
հակառակաթոռ կաթողիկոս մը՝ աստիճա-
նին բոլոր իրաւունքներով. բան մը զոր՝
կը կրկնեմ՝ Սիւնեաց առասպելն անգամ
չի գիտեր: Ոչ ալ մեք կրնանք զայդ հաշ-
տեցնել այն ներդաշնակութեան հետ՝ զոր
նկատեցինք Սիւնեաց և հայրապետական
աթոռներու միջեւ:

21. Վերջապէս պիտի դիտել տամ՝ որ
Մակար իւր թուղթն ուղղած է և կը խօսի
ոչ առանձին եպիսկոպոսի մը, և ոչ առ
Վրթանէս միայն, այլ Հայաստանեայց ամ-
բողջ նուիրապետութեան. «առ եպիսկո-
պոսապետդ տէր Վրթանէս, և առ համօրհն
եպիսկոպոս և քահանայս Հայոց» (408):
Անտեղի է ուրեմն այդ նուիրապետութեան

գլուխը նշանակուած եպիսկոպոսապետին
մէջ փոխանակ կաթողիկոսին՝ միւս եպիս-
կոպոսաց հաւասար մը տեսնել, որով նուի-
րապետութենէն դուրս պիտի մնար կաթո-
ղիկոսը, և նա միայն: Զի եթէ Մակար
կը գրէր այնպիսի շրջանի մը մէջ, որ
իրեն համարձակութիւն կու տար խօսե-
լու ամբողջ հայ կղերին, յայտնի է՝ որ
եկեղեցական համերաշխութեան ժամանակ
մ'էր այդ. որով չէր կրնար կաթողիկոսը
դուրս մնալ անոր թղթէն: Հակառակ պա-
րագային, այսինքն է հերձուածի մը շրջ-
անին, Մակար չպիտի կարենար ուղղել
իւր ձայնն և ոչ «առ համօրհն եպիսկոպոսս
և քահանայս Հայոց», որոց գէթ ստուար
ու կարեւոր մէկ մասն իրենց հայրապետին
հետ միացեալ պիտի լինէր: Եւ երուսա-
ղեմի արքեպիսկոպոսն ալ անտարբեր լու-
թեամբ մը չպիտի անցնէր այդ հերձուա-
ծին քովէն, ինչպէս չանցաւ իւր յաջորդը
Յովհաննէս, ծանր յարձակում մը գոր-
ծելով անոր դէմ՝ վերոյիշեալ առ Աբաս
թղթին մէջ:

Գալով մեր ազգին, հարկ էր որ այն
անձն՝ որուն ղիմեցին Հայք, իրենց հա-
ճելի և ընդունելի մէկը լինէր: Արդ՝ Մա-
կար Բ կ'ապրէր այնպիսի շրջան մը, ուր
մեր մէջ սկսած ու զօրացած էր հակա-
քաղկեդոն հոսանքը, և հերձուած մօտա-
լուտ: Այդպիսի ժամանակ մը հայ եկե-
ղեցւոյ առաջնորդները չէին կարող ան-
խտրաբար հրահանգ խնդրել հայրապետէն
քաղկեդոնիկ երուսաղեմի, «յորմէ զառ-
տուածային փառն կողոպտեալ մերկա-
ցուցին, և զհաւատն առաքելական գեր-
ծեալ բարձին ի նմանէն», պիտի գրէ
Աբրահամ կթղ. քիչ յետոյ (608ին) առ
Կիւրիոն²: Եւ զոր կը կրկնէին, եթէ ոչ
զրով՝ բայց սրտով ու լեզուաւ, նաեւ իւր
նախորդը Մովսէս՝ որ հայ հերձուածը
հիմնեց. և եթէ ոչ վերջնոյս նախորդը
Յովհաննէս, — որ ներքսպէս քաղկեդո-
նական էր, և յետոյ Կոստանդնուպոլսի
մէջ ալ Յունաց հետ հաղորդուեցաւ հո-

1. Կաղանկ. 217. — 2. Գիրք Քրդոց, 176,

գեւորապէս¹, — գէթ անոր և Բ Մակարայ
ժամանակակից հայ կղերին հակաքաղկե-
դոն հզօր ու երկիւղալի մասը²: Ոչ. այլ
Հայք իրենց խնդիրը մատուցին Գ դարուն,
երբ սերտ միութեան մէջ էին կաթողիկէ
Եկեղեցւոյ և անոր գլխաւոր աթոռներուն
հետ: Իրենց եպիսկոպոսապետն էր ս. Վրթ-
թանէս, և նամակին հեղինակը՝ Եկեղեցւոյ
մէջ մեծահոգակն Մակար Ա, որոյ անունն
իսկ, պատկառելի նաեւ մեր ազգին, կա-
նոնական զօրութիւն տուաւ իւր թղթին
ու զետեղեց հայ կանոնագրաց մէջ:

22. Վերեւ ակնարկեցինք մեր թղթին
մէջ երկիւցս յիշուած Արիանոսաց, որոց հետ
Տուրգ «սակաւուր միաւորեալ է և դար-
ձեալ խղճեալ»: Հ. Ալիւնեան կ'անդրա-
դառնայ և կը դիտէ. «Զի կրնար մօտ-
ծուիլ՝ թէ այս շրջանին երեւցած ըլլան
ի Հայս Արիանոսը». բայց «նաեւ Գ դարու
համար անհեղեղ» կը կարծէ անոնց գո-
յութիւնը մեր քով (549): Ըսել է՝ թէ
բուն այդ դարուն ծնած ու գործող բարե-
խիղճ արիանոսը, որոց դէմ պայքարին
մասնակցելու զնաց նաեւ մերս Արիա-
նակէս Նիկիոյ ժողովին մէջ, պէտք էին
խնայել հայ քրիստոնէից, ու չգալ խան-
դարել անոնց մտքերը: Եւ որովհետեւ Զ
դարու յայտնի պղտորիչներն էին նեստո-
րականք, «կ'երեւայ թէ», կը հետեցնէ
Պատ. Հայրը, կամ յունարէնը Ռեքետի-
կոսը գրած էր և թարգմանիչն արիանոսը
կարդացեր է, և կամ քաղկեդոնականք
իրենց հակառակորդաց այդ արհամարհա-
կան տիտղոսը կու տային (549-51): Մա-
կայն ոչ թաք բանասիրութիւնը կ'երեւայ
րեւու և կամերու չի ապաւինիր. այլ
կը բռնէ դրական ուղին, և Արիանոսաց
մէջ կը տեսնէ Ա Մակարայ հարուածած
համանուն աղանդաւորներն իսկ, առանց
բազմապատկելու ըստ հաճոյս այդ բառին
նշանակութիւնը, որ կրնայ սահման չու-
նենալ, և զոր արդէն պատմութիւնն ալ
չի արդարացներ:

Այսպէս Հ. Ալիւնեանի բոլոր կառու-
ցումները Վրթանիսի ու Տուրգի անձանց
և Արիանոսաց շուրջ՝ իրականութենէ շատ

հեռի են, և կը ծագին Մակարայ Աը
Բի վերածելու հարկէն՝ զոր զգացուցեր
են իրեն՝ վիճեալ թղթին մէջ նկատած
«բարձրակարգաւ դժուարութիւններն» Ա.
Մակարայ դէմ. և զորս հերքելով մեք, այս
կերտումներն ալ, իրենք իրենց մէջ ար-
դէն անընդունելիք, աւելորդ կը դառնան:

23. Վերջին խօսքս պիտի ուղղեմ այն
տեղափոխութեանց դէմ՝ զորս Հ. Ալիւնեան
կ'առաջարկէ մակարեան թղթին մէջ (554-
556), և որոցմով անոր շարադրութիւնը
կ'աղաւաղուի, ոչ թէ կը կանոնաւորուի,
ինչպէս ինք կը կարծէ:

Մակար կը գրէ՝ թէ Հայոց պատուի-
րակները «խնդրեցին զգրոյն (իրենց բե-
րածին) պատասխանիս, զոր (այսինքն պա-
րածին) ոչ կամէաք, ծանրացեալ
տասխանը տալ» ոչ կամէաք, ծանրացեալ
տկարութեամբ հրամանատուութեանս»
(407): Հ. Ալիւնեան պատասխանիս յա-
րաբերեալ կը բաժնէ զոր յարաբերակա-
նէն, ներդաշնակօրէն կ'ապուած իրարու.
անոնց մէջ փոխադրելով ընդարձակ կտոր
մը, «Այլ և տեսեալ զբազմազգութիւնս
և առ համօրէն եպիսկոպոսս և քահանայս
Հայոց» (408, տ. 8-27), որոյ իւր տեղ-
ւոյն մէջ մնալը կը պահանջէ իւր շարու-
ւոյն ինքնին, որ իմաստով կա-
նակութիւնն ինքնին, որ իմաստով կա-
պուած է կտորիդ հետ: Հայ պատուիրակ-
ները կը պատմեն հոգ մեր աշխարհին մէջ
տիրող անկանոնութիւնը մկրտութեան
առթիւ և այլն, որ զարմանք կը պատ-
ճառեն երուսաղեմացւոց. որով «ոչ հեղ-
գացաք, կ'ըսեն, զրել... (և) առաքել...
առ համօրէն եպիսկոպոսս և քահանայս
Հայոց, (առ ի) բազում զգուշութեամբ և եր-
կիւղիւ կատարել զկարգաւորութիւնն մեծի
խորհրդոյն» և այլն. ուր բերականօրէն
զեղչուած է կատարել անորոշին վերաբե-
րող առ ի նախդիրը: Իմաստն է. Մակար
կը գրէ թուղթը, որպէս զի Հայք զգու-
շութեամբ կատարեն խորհուրդը, մին հե-
տեւանք միւսին. իսկ Հ. Ալիւնեան իւր
տեղափոխութեամբ՝ արդիւնքը կը զատէ
պատճառէն, ինչ որ ներելի չէ:

1. Կարեւոր խնդիրներս, 384-386. — 2. Հմտ. անդ.

